34. ԼՈՒՆ ՆԱՆ ՄԸԵԾԱԿԸ

Ինում ա, չի ընում մին լու, մին մրեծակ։ Ըտրանք մարթըկնեգյ ըն ընում։ Լունն ասըմ ա. — Ա՛ կնեգյ, ծունը եկալ ա, աշխարքը կալալ, մեր կտրեն նստալ, կտերն էլ ծոռ ա, կաթիլու յա՞, քյինիմ ծունը տրեն տամ։

Մրեծակն ասըմ ա. — Ա՛ մարթ, տու մին պուճուր պրեն ըս, հո՞ւնց կըքյինիս ծունը տեն տաս։

Թա. — Չէ՛, քյունում ըմ։

— Բա վեր ծունին տակեն մնաս, էն վա՞խտը։

— Ա կնեգյ, վըեր դըխդըխկոց լսեցիր, գյիգա՞ վեր սաղ ըմ, վեր լսեցիր վուչ, գյիգա՞ վեր մրեռալ ըմ, ծունին տակավըն ըմ իլալ։

Լունն քյունում ա։ Մրեծակեն քյեփավը չի տառնում։

Անգուճ ա օնըմ, տրեսնըմ սաս-սեմունը չի կա՞։ Տունս ա կյամ կըտորը, տրեսնում լունն ծունին տակավն ա իլալ, սատկալ։ Սկսըմ ա կլոխը թակիլը, կլխին մոխեր շաղ տալը, ըսկըսըմ ա սոքյ ասիլը։

Մին ակռավ կյամ ա կտրին նստում, ասըմ. — Ա՛ մրեծակ, խե՞ յըս կլխետ մոխեր շաղ տամ, հի՞նչ ա իլալ։

Մրեծակն ասըմ ա. — Բա հո՞ւնց անիմ, վեր շաղ չիտամ, մարթս ա մրեռալ, տունս եկավ, թա՞ ծունը տեն տա՞, ծունին տակավն ըլավ։

Ակռավն ասում ա. — Վա՞յ, վա՞յ, խըեղճ լու ախպեր, էս հո՞ւնց կանինք, էս հի՞նչ կանինք, ըսկսում ա ուրան թեփուռնին պուք տալը, լաց ինիլը։ Ետավ թռչում ա, նստում մին ծառի։

Ծառն ասում ա.— Ա՛յ ակռավ, բա տու ամեն օր սև նան ղալին թեփուտներավ ըս իլա՛լ, ըշտեղ՞ ա քու թեփուտնիտ։

Ակռավը ծառին յրան ասըմ ա.— Բա ասիլ չը՞ս, լուն ծունը տրեն տալիս սատկից, մրեծակը կլխին մոխեր շաղ տվավ, յրես էլ թեփուտնիս թափեցի։

Ծառն ասըմ ա. — Խրե՞ղճ, վա՞յ, վա՞յ։ Ինքն էլ ուրա՛ն տիրևնին ա թափու՞մ։

Ծառին տակը մին վեշխար ա կյամ, վրեր սա՛րինումը նստի։ Տեսնում ա ծառը տկլոր ա, ասում ա.— Ա՛ ծառ, ըրեգյի տու զըրթա՛րված ըս իլա՛լ նախշուն տիրևներավ, ամմա ըսօր մնացալ ըս տկլոր, էտ ըշտե՞ղ ա քու տիրևնիտ։

Ծառն ասըմ ա.— Ցրես հի՞նչ անիմ, հի՞նչ չանիմ, հի՞նչ վրեղ տամ կլխիս, հի՞նչ ցեխ տամ կլխիս, բա ասիլ չը՞ս լուն կըտերը եր իլա՛վ, վրեր ծունը տրեն տա, ընգավ ծունին տակը, սատկից, մրեծակը կլխին մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տրվավ, յրես էլ տիրևնիս թափեցի։

Վեշխարն ասըմ ա. — Վա՞յ, վա՞յ, էս հո՞ւնց կանիմ, էս հի՞նչ կանիմ,— համ լա՛ց ա ինում, համ էլ ուրա՛ն կեռ պոզերը կուտրատում։

Վեշխարը քյունում ա կյրետին կոխկը ճուր խմի։ Ճուրը տեսնում ա ըտրա կեռ պոզերը կուտրատած, ասըմ ա. — Ա՛ վեշխար, հո՞ր ա քու կեռ-կեռ պոզերըտ, երեգյ իտի չի եկեր իմ կոշտս։

— Է՞հ, հի՞նչ անիմ, վրեր պոզերս կուտրատիմ վե՞չ, լուն ծունը տեն տալիս, ընգավ ծունին տակը, սատկից, մրեծակը կլխեն մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տվավ, ծառը տիրևնին թափից, յրես էլ իմ պոզերս կոտրեցի։

Ճուրրն ասըմ ա. — Էս հի՞նչ ա՛լամա՛թ պրեն ա, էս հի՞նչ կանինք, էս հո՞ւնց կանինք։ Վա՞յ, վա՞յ յրես էլ տեռնամ արուն։

Մին պառավ կնեգյ կյամ ա կոժն օսին ուրա՛ն խանումին մհար ճուր տանի։

Տրեսնում ա ճուրը արուն ա տեռալ, ասում ա.— Ա՛յ ցորտ ճուր, բա տու ինգի թա՛մուղ իր, համավ իր, էտ խե՞ յրս արուն տրեռա՞լ։

Ճուրրն ասըմ ա.— Դե, հի՞նչ անիմ, վրեր փոխվիմ վեչ, լուն ծունին տակեն մնաց, սատկից, մրեծակը կլխեն մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տվավ, ծառը տիրևնին եր ածից, ղոչը պոզերը կուտրատից, յրես էլ ա՛րուն տեռի։

Պառավը վա՞յ ա տամ ուրա՛ն կլխին, դա՛ռդա՛ն կոժը կոտրում, քյնում ուրա՛ն խանումին կոշտը։

Խանումը ասում ա.— Ա՛ պառավ, բա հո՞ր ա կոժը։

Պառավը լաց ինիլավ ասըմ ա. — Բա ասիլ չը՞ս, լուն ծունը տունս տալիս վախտը ծունին տակավը ընգավ, սատկից, մըեծակը կըլխին մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տվավ, ծառը աիրենին թափից, ղոչը պոզերը կուտրատից, ճուրն էլ արուն ա տեռալ, յըես էլ դարդերաս նըհետ կոժս կոտրեցի։

Խանումը մեծ դարդի մեչ ա ընգնում։ Ասում ա.— Վըեր իտի յա, յըես էլ իմ ծամերս կկտրիմ։

Քշերը աղան կյամ ա տոն, տեսնում խանումը ծամերը կտորած։ Զոռի ըշըղվում ա, ասում.— Հո՞ր ա քու ծամերտ։

Խանումն ասում ա. — Մեծ դարդ ա պըտահալ, բա ասիլ չը՞ս, լուն ծունը տունս տալիս ընգավ ծունին տակը, սատկից, մըեծակը մոխեր շաղ տվավ յրան, ակռավը ուրան թեփուտնին պուք տըվավ, վեշխարը ուրան պոզերը կուտրատից, ծառը ուրան տիրևնին թափից, ճուրը արուն տեռավ, պառավն էլ կոժը կոտրից, յըես էլ ծամերս կտրեցի։

Աղան ասում ա. Վըեր իտի յա, յըես էլ իմ բեղերըս կտրիմ, էլ հի՞նչի՞ յա պետք։

Էն մին օրը տխուր տրտում քյունում ա կործի։

Զորանը շվվի ածելիս տըեսնում ա, վըեր աղան տխուր ա։ Հըրցնում ա.— Աղա ջա՞ն, բա խե՞ յըս տխուր։

Աղան լոխ նաղլ ա անում։ Զորանը շվվին կոտրում ա, տխուր, օնքերը ուրուր տված քյնամ ծմակը։ Մին ծառի տակե նստում ա մտածում։

Քաշկերը կյամ ըն, ասում.— Զորան, խե՞ յըս իտի տխուր, ախեր տու միշտ շվվի յիր ածում, օրախ-օրախ, բա քյըեզ հի՞նչ իլավ։

Զորանն ասում ա. — Բա խտի-խտի պեներ.— Մեր պարեկամ լուն ծունը տունս տալիս տակավը ընգավ սատկից, մըեծակը մոխեր շաղ տվավ կլխին։ Ակռավը թեփուտնին պուք տըվավ, պառավը ճրի քյնաց, կոժը կոտրից, ծառը ուրան տիրևնին թափից, վեշխարը ուրան պոզերը կուտրատից, աղան ուրան բեղերը կտրից, խանումը ուրան ծամերը, յըես էլ էտ լոխ տըսնալավ իմ շվվիս կուարեցի։ Բա յըես տխուր չինի՞մ, հո՞ւ ինի՞։

Քաշկերը հրոհրռում ըն, հրոհրռում, ասում.— Լոխ չոբան ըք իլա՞լ, վեր իտի-իտի պեներ ըք փոնա՞լ...